ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ
Դրամաշնորհ No. TF016980

ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն հայտնում է, որ Համաշխարհային բանկի «Հայաստանում Երիտասարդների ներգրավվածության խթանման» դրամաշնորհային ծրագրի /ԵՆԽԾ/ շրջանակում Ծրագրի համակարգողի տեղակալի համար խորհրդատու ընտրելու նպատակով հայտարարվում է անհատ խորհրդատուի ընտրության մրցույթ:

Ընտրված Ծրագրի համակարգողի տեղակալը Ծրագրի համակարգողի հսկողության ներքո պատասխանատու է լինելու ԵՆԽԾ-ի ամենօրյա կառավարման համար՝ ծրագրի միջոցառումների իրականացման հարցում ապահովելով արդյունավետ համագործակցություն եւ համակարգում:

Խորհրդատուն պետք է իրականացնի հետեւյալ առաջադրանքները.

- Վերահսկի ծրագրի աշխատանքների ընդհանուր կառավարումը ծրագրի նպատակներին համաձայն,
- Իրականացնի ծրագրի միջոցառումների եւ գործընկերների/խորհրդատուների ընդհանուր համակարգումն ու պատասխանատու լինի այդ միջոցառումների արդյունավետ իրականացման համար,
- Վերահսկի ԾՀԳ գործունեության ընդհանուր ղեկավարումը, այդ թվում ծրագրի աշխատանքների կազմակերպումը, ԵՆԽԾ գործողությունների պլանի մշակումը եւ պարբերական թարմացումները, ծրագրի մասնագետների գործունեության համար նպաստավոր պայմանների ապահովումը աշխատաժամանակի արդյունավետ օգտագործումը, ենթածրագրերի եւ միջոցառումների իրականացման եւ հսկողության ապահովումը, անհրաժեշտության դեպքում ծրագրի գործառնական ձեռնարկի թարմացումը եւ լրացուցիչ ձեռնարկների մշակումը, ինչպես նաեւ ՀԲ-ի հետ ծրագրային խնդիրների վերաբերյալ ամենօրյա հաղորդակցության ապահովումը,
- Ծրագրի հիմնական կատարողական ցուցանիշների մոնիթորինգ եւ ծրագրի առավելագույն ցուցանիշների առավելագույնս ապահովելու նպատակով անհրաժեշտ «ուղղիչ» միջոցառումների իրականացում,
- մասնակցություն Ծրագրի շահառու մարմիններին (ԱՍՀՆ, ՍԵՀՆ, ԱՖԾԿԿ, ՏԻՄ-եր և այլն) անհրաժեշտ օժանդակության տրամադրման եւ վերջիններիս միջև փոխգործակցության ապահովման աշխատանքներին,
- աջակցություն ՀՀ ԱՍՀՆ-ին եւ ԾԻԳ-ին՝ Ծրագրի բյուջեի մշակման աշխատանքներին,
- մասնակցություն՝ ՀՀ ԱՍՀՆ եւ ՀԲ ներկայացվելիք Ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունների եւ պահանջվող այլ փաստաթղթերի մշակման աշխատանքներին,
- մասնակցություն Խորհրդատուների ընտրության համար անհրաժեշտ Տեխնիկական առաջադրանքների մշակման աշխատանքներին եւ մրցույթների գնահատմանը եւ ընտրությանը,
- Հետեւի, որպեսզի Ծրագիրն իրականացվի ՀՀ օրենսդրության պահանջների, ՀԲ-ի սահմանած կարգերի եւ ստանդարտների, Դրամաշնորհային համաձայնագրի համաձայն,
- աջակցություն Ծրագրի շրջանակներում Խորհրդատուների կողմից պայմանագրերի իրականացման վերահսկման, մատուցված ծառայությունների ընդունման աշխատանքներին,
- Դաշտային այցելությունների իրականացում, ներառյալ այցերը պիլոտային համայնքներ և կազմակերպություններ՝ ապահովելու համար Ծրագրային միջոցառումների արդյունավետ իրականացումը,
- աջակցություն ԵՆԽԾ շրջանակներում իրականացվող միջոցառումների վերաբերյալ հանրային իրազեկման ապահովման աշխատանքներին,

- Ծրագրի արդյունավետ կազմակերպման նպատակով ըստ անհրաժեշտության իրականացնի այլ համապատասխան աշխատանքներ եւ փոխարինի Ծրագրի համակարգողին եւ այլն:

Ծառայությունները նախատեսվում է իրականացնել 2015թ. նոյեմբերից 2016թ. մարտ ամիսների ընթացքում:

Խորհրդատուն պետք է բավարարի հետեւյալ որակավորման չափանիշներին եւ պետք է ունենա՝

- բարձրագույն մասնագիտական կրթություն սոցիալ-տնտեսագիտական գիտությունների ոլորտում կամ այլ համարժեք ոլորտում, ծրագրերի կառավարման եւ իրականցման 8 եւ ավելի տարիների փորձ,
- երիտասարդների ներգրավվման եւ համայնքային մակարդակով զարգացման ոլորտում զգալի փորձ,
- պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի եւ ռազմավարության, ինչպես նաեւ պետական երիտասարդական ծրագրերի իմացություն,
- սեղմ ժամկետներում զարգացման ծրագրի իրականացումը կառավարելու եւ ծրագրի իրականցման ընթացքում ծագած դժվարություններին նախաձեռնողական լուծումներ տալու ապացուցված կարողություն,
- միջազգային կազմակերպությունների հետ աշխատելու փորձը կդիտվի որպես առավելություն,
- կազմակերպչական, բանակցություններ վարելու, մարդկանց հետ արդյունավետ հաղորդակցվելու հմտություններ (զեկույցներ գրելու ունակությունը պարտադիր է),
- անգլերեն և հայերեն լեզուների սահուն իմացությունը (ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր) պարտադիր է,
- համակարգչային գիտելիքներ,
- երաշխավորագրեր:

Մեծապես խրախուսվում է որակավորված երիտասարդ դիմորդների (30 տարեկան և ցածր) մասնակցությունը:

Վերը շարադրված պահանջներին համապատասխանող անհատ խորհրդատուները կարող են մինչև 2015թ. հոկտեմբերի 30-ը ներկայացնել հետաքրքրվածության գրություն և կենսագրական թերթիկ՝ ստորև նշված հասցեով: Հետաքրքրվածության հայտերը կարող են ներկայացվել նաև էլեկտրոնային փոստով:

ՀՀ ֆինանսների նախարարության
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ
Գործադիր տնօրեն
պրն Էդգար Ավետյանին
Հասցե՝ ՀՀ, 0010 Երևան, Տիգրան Մեծի պողոտա 4, 3-րդ հարկ,
Հեռ՝ (374-11) 91 05 81, (374-11) 91 05 90
Էլ-փոստ՝ info@ffpmc.am